ՆԱԽԱԳԾԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծի հիմնական խնդիրներն իրագործվում են. (ա) նախագծի Հայաստանյան գործընկեր կազմակերպությունների բազմաթիվ ներկայացուցիչների համար ճանաչողական այցերի, տեղեկատվական և վարժանքային սեմինարների, աշխատաժողովների և վերապատրաստումների անցկացման, (բ) Հայաստանի բարձրագույն կրթության հանրության և աշխատաշուկայի ներկայացուցիչների համար տեղեկատվական գիտաժողովների կազմակերպման, (գ) համապատասխան փաստաթղթերի և տեղեկատվական նյութերի մշակման և տարածման միջոցով:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- ✓ Համապատասխան կանոնակարգային և մեթոդաբանական հենքի ու մի շարք գործիքների միջոցով գործնականացված ՀՀ ՈԱԾ,
- ✓ ՀՀ ՈԱԾ-ի իրականացման ռազմավարություն և ինքնահավաստագրման զեկույց,
  ՀՀ ՈԱԾ-ի կառավարման հանձնաժողով,
- ✓ որակավորումների ոլորտային շրջանակի ազգային մոդել և ՈՈԾ-ների 5 նմուշօրինակ՝ ֆիզիկայի, իրավագիտության, կրթության, քաղաքացիական շինարարության և գյուղատնտեսության ոլորտներում,
- ✓ ՀՀ ՈԱԾ-ին և ՈՈԾ-ին համապատասխան կրթական վերջնարդյունքների վրա հիմնված ուսումնական ծրագրի մշակման մեթոդաբանություն և ուղեցույցներ,
- ✓ կրթական վերջնարդյունքներով արտահայտված երկմակարդակ ծրագրերի օրինակներ՝ որպես ուղեցույց նախագծի մասնակից ՀՀ բուհերի համար,
- ✓ բուհերի, ոլորտը կարգավորող պետական մարմինների և հանրային գործընկերների կարողությունների զարգացում՝ ՀՀ ՈԱԾ-ի և ՈՈԾ-ի հետ աշխատելու համար,
- ✓ ՀՀ ՈԱԾ-ին և դրա առավելություններին իրազեկ հասարակություն:

ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել նախագծի ազգային համակարգողներին.

Արմեն Բուդաղյան
Երևանի պետական համալսարան, **abudaghyan@ysu.am**

Քրիստինա Ծատուրյան,
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
kristina.tsaturyan@gmail.com,
Վեբկայք: www.armenqa.am

ՏԵՄՊՈՒՍ “ARMENQA” ՆԱԽԱԳԻԾ

«ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»

Tempus

ARMENQA

Ի՞ՆՉ Է “ARMENQA”-Ն

Տեմպուս “ARMENQA”-ն ազգային նշանակության եռամյա նախագիծ է, որն ուղղված է Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների (ՈԱՇ և ՈՈՇ) իրականացմանը Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ):

Նախագիծը ֆինանսավորվում է Եվրոպական հանձնաժողովի կողմից՝ Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում: Նախագծի նպատակն է բարձրացնել ՀՀ բուհերի շրջանավարտների զբաղվածությունը և նպաստել ՀՀ որակավորումների ճանաչմանը աշխատաշուկայում՝ ազգային և միջազգային մակարդակներում:

Նախագիծը որդեգրել է ՈԱՇ-ի և ՈՈՇ-ի իրականացման համապարփակ մոտեցում՝ հետևյալ խնդիրներով.

- ՀՀ ՈԱՇ-ի գործնականացում՝ օրենսդրական, կանոնադրական և մեթոդաբանական հենքի ու մի շարք գործիքների ստեղծման և կիրարկման միջոցով,
- ՈԱՇ-ի մասին հիմնական շահակիցների՝ բուհերի, ուսանողների և շրջանավարտների, գործատուների ու աշխատաշուկայի ներկայացուցիչների, ոլորտը կարգավորող պետական մարմինների ու հանրային գործընկերների կարողությունների զարգացում,
- ՀՀ-ում ՈՈՇ-ների ստեղծման և փորձարկման նպատակով ազգային մոդելի և մեթոդաբանական հենքի մշակում,
- ՀՀ բուհերին ծրագրային կողմնորոշիչների, մեթոդաբանական հենքի և պրակտիկ գործիքների տրամադրում՝ կրթական վերջնարդյունքների (ԿՎ) վրա հիմնված բազմամակարդակ կրթական ծրագրերի մշակման համար, որոնք համահունչ են ՀՀ ՈԱՇ-ի, ՈՈՇ-ի և աշխատաշուկայի պահանջներին:

ԻՆՉՈ՞Ւ Է ԿԱՐԵՎՈՐ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԸ

ՈԱՇ-ն ներառում է ՀՀ կրթական հաստատությունների կողմից բոլոր մակարդակներում տրամադրվող որակավորումները: Այն համապարփակ գործիք է, որը նկարագրում է, թե շրջանավարտը ինչ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ է ձեռք բերել որակավորման տվյալ մակարդակում և նպաստում է Հայաստանում շնորհված որակավորումների թափանցիկությանը, համադրելիությանը և ճանաչմանը: ՀՀ ՈԱՇ-ի կարևորագույն շահառուներն են՝ ՀՀ բուհերը, աշխատաշուկան, ոլորտը կարգավորող պետական մարմինները, ուսանողները և լայն հանրությունը: ՀՀ ՈԱՇ-ի իրականացումը կնպաստի շրջանավարտների զբաղվածության բարձրացմանը՝ գործատուներին տրամադրելով տարբեր մակարդակների որակավորումները հասկանալու և ճանաչելու մի համապարփակ գործիք: ՀՀ ՈԱՇ-ն կնպաստի նաև ուսանողների և շրջանավարտների միջազգային շարժունությանը, կխթանի Հայաստանում շնորհված որակավորումների ճանաչումը արտասահմանում:

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

Բուհեր

- Կրթական վերջնարդյունքներով արտահայտված ուսումնական ծրագրերի մշակման և գնահատման կողմնորոշիչներ,
- արտասահմանում ստացված որակավորումների ճանաչման գործիք,
- շնորհած որակավորումների վերաբերյալ բուհերի հաշվետվողականություն:

Գործատուներ

- Աջակցություն գործատուներին՝ տարբեր մակարդակների և ոլորտների որակավորումները մեկնաբանելու և հասկանալու համար,
- տեղեկատվության տրամադրում որակավորման յուրաքանչյուր մակարդակում ձեռքբերված գիտելիքների, կարողությունների և հմտությունների վերաբերյալ:

Հանրություն՝ ներառյալ ուսանողներ և շրջանավարտներ

- Նպաստում շարժունությանը՝ ազգային և միջազգային մակարդակներում,
- օժանդակություն՝ զբաղվածության ընդլայնմանը,
- անհատական զարգացման խրախուսում՝ ինֆորմալ կրթության հավաստման միջոցով:

ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

ԵՄ երկրների գործընկերներ

Համակարգող՝ Լինչոփինգի համալսարան, Շվեդիա

- Գենտի համալսարան, Բելգիա
- Օգնաբրյուքի բարձրագույն դպրոց/Կիրառական գիտությունների համալսարան, Գերմանիա
- Օրհուսի համալսարան, Դանիա
- Որակավորումների ազգային դեպարտամենտ, Ռումինիա

Հայաստանյան գործընկերներ

Ազգային համակարգողներ՝ Երևանի պետական համալսարան, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Մասնակից բուհեր

- Հայաստանի ազգային ագրարային համալսարան
- Գյումրու Միքայել Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ
- Երևանի Վալերի Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան
- Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան
- Ռուս-հայկական սլավոնական համալսարան
- Գավառի պետական համալսարան

Ոլորտը կարգավորող պետական մարմիններ

- ՀՀ կրթության և գիտության նախարարություն
- Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն

Հանրային գործընկերներ

- Հայաստանի գործատուների հանրապետական միություն
- Երևանի «Եվրոպական ուսանողների ֆորում» ընկերակցություն
- Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն